



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ՀԵՂԻՆԱԿ՝ ՖԵՐՈՅԱՆ ԳՈՀԱՐ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱՎ/ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՂԵԿԱՎԱՐ Բաղայրյան Կամո

ԴՊՐՈՑ՝ ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Ներածություն----- | 3 |
| Մեթոդամանկավարժական հմտությունների կիրառումը տեխնոլոգիա առարկայի ժամանակ ----- | 5 |
| Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների զարգացում առարկայի դասավանդման ընթացքում----- | 8 |
| Եզրակացություն----- | 20 |
| Օգտագործված գրականության ցանկ----- | 22 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության էությունը նրա դինամիկան է ու զարգացումը նպատակներից դեպի արդյունքները, որոնք ոչ միայն կրթության, այլ նաև ուսուցման և դաստիարակության արդյունքներն են:

Նկարագրելով աշակերտի կարողությունները՝ կարևորագույն բաղադրիչներից են ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական կարողությունները: Ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական կարողությունները որպես անհատականության կայուն մաս ապահովում են հաջողության բարձր մակարդակ և պլանների գործնական իրագործելիություն և ցանկացած գործունեության մեջ կարևոր նախաձեռնություն: Ստեղծագործական ունակություններ ասելով հասկանում ենք անհատական հոգեֆիզիոլոգիական գծերի և նոր որակական վիճակների (մտածողության, ընկալման, կյանքի փորձի, մոտիվացիոն ոլորտի փոփոխություններ) սինթեզ, որոնք առաջանում են անհատի համար նոր գործունեության գործընթացում (նոր խնդիրների լուծման գործընթացում), առաջադրանքներ, ինչը հանգեցնում է դրա հաջող իրականացմանը կամ սուբյեկտիվ/օբյեկտիվորեն նոր արտադրանքի (գաղափար, առարկա, արվեստի գործ և այլն) ի հայտ գալուն: Ստեղծագործական կարողություն բնորոշ է յուրաքանչյուրին, նրանք ձևավորվում և զարգանում են գործունեության մեջ:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Այսօր արդիական մեթոդ է համարվում ժամանակակից ուսուցումը: Ժամանակակից ուսուցումը աշակերտակենտրոն է, և դասավանդման ժամանակ անհրաժեշտ է կիրառել մանկավարժական այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք աշակերտների մեջ կսերմանեն նախաձեռնողական, ինքնուրույնության և ստեղծագործական ունակություններ: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Հետևաբար՝

ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը՝ նպատակ, արդիականություն և խնդիրներ:

ԱՇխատանքի ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դպրոցական տարիքը կարևոր փուլ է մարդու զարգացման համար: Սույն աշխատանքում համապարփակ ներկայացվում է դպրոցականի տարիքային առանձնահատկությունները և մանկավարժական մոտեցման հմտությունների կարևորությունը:

ԱՇխատանքի ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերոնշյալ նպատակի իրականացման համար մեր առաջադիր խնդիրներն են.

1. ծանոթացնել ժողովրդական արհեստների տեսակներին, գեղեցիկի և գործառնականի մասին, շինվածքների գեղարվեստական ձևավորման տեսակներին: Տեսական գիտելիքների իմացությանը և գործածմանը,
2. նյութերի հավաքում, մշակում օգտագործում,
3. գիտելիքների կիրառումը գործնականում,
4. գործնական աշխատանքների կատարումը:

ԱՇխատանքի ՆՊԱՏԱԿԸ

Սույն աշխատանքի նպատակն է զարգացնել մանկավարժական մտածողությունը, մատնանշել մեթոդների կարևորությունը և ցույց տալ, թե ինչպես է պետք մեթոդների միջոցով զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ինքնուրույն աշխատանքների միջոցով աշակերտների մոտ զարգացնել ինքնուրույն մտածողություն, ճիշտ կողմնորոշում, ինքնագնահատականի բարձրացում, սեփական ուժերի նկատմամբ վստահություն, պարզից բարդ աշխատանքներ գտնելու լուծումներ: Տիրապետեն գեղարվեստական դեկորատիվ արտադրանքի սկզբունքին, մշակման տեխնոլոգիան, կատարել ժամանակակից և ավանդական զարդանախշերի էսքիզներ, ասեղնագործել և վերջնամշակել շինվածք:

ՄԵԹՈԴԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Կրթության բնագավառում կարևոր և արժանահավատ դեր ունեն թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդները, որոնց կիրառման միջոցով նախևառաջ կզարգանան և առավել կբարելավվեն սովորող-սովորեցնող փոխհարաբերությունները:


Յուրի Ամիրջանյանը և Անատոլի Սահակյանը իրենց համատեղ աշխատության մեջ, անդրադառնալով մանկավարժական մեթոդաբանությանը, նշում են.

«Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ: Այլ կերպ ասած, մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում»

Ուսուցման ընթացքում ինքնուրույնություն, նախաձեռնություն և կարողությունները զարգացնելու համար մեծ նշանակություն ունի գործնական աշխատանքների անցկացումը, այդ իսկ պատճառով դասընթացի 70 %-ը տրվում է գործնական աշխատանքների, իսկ 30 %-ը տեսականին:

30% Տեսական
դաս,

70 % գործնական
դաս



Մեթոդամանկավարժական հմտությունները կարող ենք դիտարկել հետևյալ կերպ



**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ և
ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 6- ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ և
ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**


Տեխնոլոգիա առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական կարողությունների զարգացման լայն հնարավորություն է տրվում: Ուսումնառության ընթացքում կարողանում են ինքնադրսևորվել, ինքնուրույնություն հանդես բերել, նախաձեռնել նոր մտահաղացումներ, ստեղծագործաբար մոտենալ պահանջվող աշխատանքին: Գործնական աշխատանքների ժամանակ ի հայտ են գալիս աշակերտների գիտելիքներում, կարողություններում և հմտություններում:

Իմանալով տեսական տեղեկություններ, ծանոթանալով շինվածքի պատրաստման քայլաշարին, օգտագործվող նյութերին, գործիքներին, պարզաներին, տեսնելով պատրաստի շինվածքի նմուշ – օրինակը, աշակերտը կարող է ինքնուրույն պատկերացնել և պատրաստել տրված աշխատանքը, ինքնուրույն գտնել նոր լուծումներ, իրագործել նոր մտահաղացումներ: Ինքնուրույն կարող է կազմել տեխնոլոգիական քարտ հանդես բերել ստաղծագործական մտահաղացումներ: Օրինակ՝ «Նյութերի գեղարվեստական մշակում» թեմայից ասեղնագործության ժամանակ ծանոթանալով՝ զարդանախշերին, կարատեսակներին, օգտագործվող նյութերին, պարագաներին, գործիքներին, ինքնուրույն կարող է ընտրել մշակման տեխնիկան:

Ջարդանախշեր



ԱՍԵՂՆԱԿԱՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ




Հայկական ասեղնագործ արվեստի մեջ հանդիպում են երկրաչափական, բուսական, ճարտարապետական ինչպես նաև երկնային մարմինների ֆանտաստիկ ձևերի պարզ ու բարդ բովանդակություն ունեցող զարդանկարներ, պատկերազրույթներ:

Եկեղեցական ասեղնագործություններ՝ թե պատկերազրույթամբ թե՛ գունային լուծմամբ մեծ նմանություն ունեն մանրանկարչության հետ: Պահպանելով հայ լուսավորչական կրոնի կանոնների, դրանք արտահայտում են միասնական առանձնահատուկ ոճ: Դարերի խորքից գալով, ասեղնագործական նախշերը մշակվել են և ստացել են կատարյալ ձևեր: Փոխելով նախշի գծերը, ասեղնագործողը կամ ժող. ստողծագործողը կառուցում է նույն զարդանկարի տարատեսակներ, ինչպիսին կարելի է տեսնել Սյունիքի, Վասպուրականի, Շիրակի, Կարինի, Կիլիկիայի ասեղնագործ աշխատանքներում: ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. սա է արվեստի հայկական ոճի կարևոր առանձնահատկությունը: Մարաշի ասեղնագործության հարթակարը կոչվում է կութ-

ասեղ: Ավելի բարդ է Մարաշի հյուսված կարը: Վան-Վասպուրականի կարը տեխնիկապես մնալով նույնը, շնորհիվ տարբեր թելերի գործածության, տարբեր տեսք է ընդունել: Վանի կարի ժամանակ կիրառվում է թեթև, երբեմն թափանցիկ կտավ, որպեսզի հնարավոր լինի հաշվել կտորի թելերը: Հաճախ կտորի հաստ լինելու դեպքում, ոսկեթելը դրվում է կտորի վրա և վուշյա, մետաքսյա թելերով ամուր կարվում կտորին: Ամրացնող թելի կարով, մանր կութերով վրայից տարբեր նախշեր են արել: Վերադիր են կոչվում այն կարերը, երբ մեծ կտորների վրա այլ կտորներից նախշեր են արվում: Հայկական ասեղնագործության մեջ հանդիպում են բազմափիվ ասեղնակարեր: Դրանց մի մասը տարածված է եղել բոլոր հայաբնակ վայրերում, իսկ մյուս մասը տեղական բնույթ է կրել և զարգացել որոշ վայրերում միայն, ինչպես Սասունի, Մուշի, Մարաշի, Վանի, Այնթապի ասեղնագործություններում: Ամեն տարածաշրջան ունեցել է իր ասեղնագործության դպրոցը: Որքան բազմազան է հայ բարբառը, այնքան բազմազան են հայկական ասեղնակարերը:

Ասեղնակարերը, զարդակարերը անցել են երկար ճանապարհ: Մեր նախնիները հասարակ շուկա կարով սքանչելի զարդարանքներ են ստեղծել: Տարածված են շղթայակարը, շյուղակարը, վրակար-կողբակարը, օղակակարը, խաչկարը և այլ տեսակներ:





ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ



ԹԵԼԵՐ-Ձեռքի ասեղնագործության համար կիրառվող թելերը տարբերվում են որակով, կառուցվածքով, հաստությամբ և գույնով: Ավելի հաճախ կիրառում են հատուկ/մուլինե/թելեր: Կարելի է օգտագործել բրոյա մանվածքաթել, գործվածքներից հանված թելեր, մեղաքսաթելեր, որոնք պետք է լինեն փափուկ, փայլուն և ոչ շատ ոլորված: Շատ բարակ գործվածքների վրա ասեղնագործում են մուլինե կամ մետաքսե թելերով: Բրոյա գործվածքի վրա կարելի է ասեղնագործել մեկ կամ մի քանի տակ բրոյա և մետաքսե թելերով՝ կախված գործվածքի հաստությունից: Խոշոր աշխատանքների/բարձ, ծածկոց/ համար հաճախ օգտագործում են շտապելային և սինթետիկ թելեր:



ԱՍԵՂՆԵՐ – կարող են լինել կարճ և երկար, սակայն լայն անցքով/ հ.1 և 2/: Թելի երկարությունը սովորաբար վերցնում են 50-60 սմ:



ՄԱՏՆՈՑ – անհրաժեշտ է ասեղը հրելու և մատները չծակելու համար:



ԹԵԼԻՉ - օգնում է թելն ասեղի անցքով հեշտությամբ անցկացնելու/թելելու համար/
ՄԿՐԱՏՆԵՐ – անհրաժեշտ են գործվածքը ձևելու, թելերը կտրելու և մանր աշխատանքներ կատարելու համար/կեռ ծայրով/:



ՔԱՐԳԱՀ – ասեղնագործական շրջանակ է , որի միջոցով գործվածքը պահվում է ձգված վիճակում և չի դեֆորմացվում: Լինում են ուղղանկյուն, կլոր, փայտյա կամ պլաստմասսե քարգահներ: Ավելի հարմար է կլոր քարգահը, որը կազմված է 20-40սմ. Տրամագծով իրար մեջ մտնող երկու օղագոտիներից:



ՄԱՏԻՏՆԵՐ – պետք է լինեն լավ սրված: Փափուկ մատիտով թղթի վրա կատարում են էսքիզը, իսկ կոշտ մատիտով նկարը փոխանցում են գործվածքի վրա:

ԱՍԵՂՆԱՐՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԱՅՆԹԱՊԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԱՇԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՍՅՈՒՆԻՔԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ



ՎԱՆ-ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱԶԿԱՐ
ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԱՅՆԹԱՊԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ



ՄԱՐԱՇԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ




ՍՅՈՒՆԻՔԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ԽԱՉԿԱՐ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ուսումնառությունը մեթոդ է, որն օգնում է ուսուցչին պարզելու սովորողի ունակությունը: Ինքնուրույն աշխատելով՝ սովորողը պետք աստիճանաբար տիրապետի ինքնուրույն աշխատանքի այնպիսի ընդհանուր մեթոդների, ինչպիսիք են աշխատանքի նպատակի հատուկ գիտակցումը, ներկայացումը և սխալի ուղղումը: Ինքնուրույն ուսումնառությունը նպաստում է դասարանում դասերի կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը: Երեխաները բավարարվածության զգացում են ունենում յուրաքանչյուր ճիշտ լուծումը գտնելուց հետո, որը ձեռք է բերվում խնդրի լուծման փորձի հաղթահարման արդյունքում, ուժեղ խթան է հաղորդում ճանաչողական գործունեությունը մեծացնելու համար:

Աշակերտները, ներառյալ թույլերը, սկսում են վստահել իրենց ունակություններին, այլևս չեն վախենում անծանոթ իրավիճակից, կարողանում են կողմնորոշվել գտնել նոր լուծումներ, բացահայտել մշակման ձևեր: Այս ամենը նպաստում է աշակերտի մտածողության ակտիվացմանը, ուսման համար դրական մոտիվացիայի ատեղծմանը: Յուրաքանչյուր աշակերտ անհատականություն է և անհրաժեշտ է ուշադիր և սիրով աշխատել նրա հետ: Բազմաբնույթ աշխատանքներ, որոնք սովորողների հնարավորությունները հաշվի առնելով են կազմված, դասարանում բարենպաստ հոգեբանական մթնոլորտ են ստեղծում: Հաջողությունը, փորձությունների հաղթահարման հզոր խթան է հանդիսանում ճանաչողական գործունեությունը մեծացնելու համար: Նման գործառույթի արդյունքում սովորողները սովորում են ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ձրավորվում է ստեղծագործական մտածողությունը: Ինքնուրույն ուսուցման ժամանակ կիրառված տարբերակված մոտեցումը թույլ է տալիս սովորեցնել բոլորին, բայց տարբեր ձևերով:

Սա նշանակում է, որ հիմնական դասընթացը տիրապետելու համար որոշ սովորողներ իրենց արդյունքներում սահմանափակվում են պարտադիր ուսուցման մակարդակով, մյուսները, իրենց ցանկությունների և հնարավորությունների համաձայն, հասնում են ավելի բարձր մակարդակների: Հատկապես այդպիսի գործունեությունը աշակերտի մոտ ձևավորում է պատասխանատվություն կյանքում ծագած խնդիրները ինքնուրույն լուծելու, սեփական որոշումները կայացնելու համար: Այսպիսով, տեխնոլոգիա առարկայի դասավանդման ժամանակ ինքնուրույն աշխատանքները

զարգացնում են աշակերտների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ» հրատ., 2005:
2. «Մեթոդական ցուցումներ ասեղնագործության մասին» ձեռնարկ հեղինակ՝ Սերիկ Դավթյան
3. «Ասեղնագործություն» Կարինե Պապիկյան
4. . http://elib.gnpbu.ru/text/bozhovich_lichnost-i-ee-formirovanie_2008/